


15511



187<sup>3</sup>

ՍԱՀՄԱՆՈՂԹԱԿԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԹԱԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՂՈՑ ՀԱՄԱՐ

ՎԱԻԵՐԱՅԵԱԼ

Ի ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՌՆ ՃՈՂՈՎՈՅ

ԿԵՐՊՈՎԱԿԱՆ ՎԱՐՉՈՒՐԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ · ԽԹՁԱՅՄԵԱՆ

Կ · ՊՕԼԻՍ

ԵՈՒՍՈՒԹԵԱՆ ԽԱՌ

332(562)  
U-15

1873

ՀՀՀՀՀՀ  
4-15

այ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԹԱՂԱԿԱՆ ԻՈՒՀՇՐԴՈՅ ՀԱՄԱՐ

ՎԱԻԵՐԱՅԵԱԼ

Ի ԿՐՈՆԱԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՅՆ ԺՈՂՈՎՈՅ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒՐԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Օ ԽՈՃԱՍՏԵԱՆ

1873

7319

## Ա Զ Դ

Թաղական խորհրդոց համար պատրաստեալ Հրահնիւ այն մասերը, որ Սահմանադրութեան տրամադրութեանց հետևելով, թաղական խորհրդոց ընթացից կանոնաւորութեանը և անոնց պաշտաման ու պարտաւորութեանց ճշգութեանը համար, կեդր. Վարչութեան կրօն. և Քաղ. Խառն ժողովոյ կողմէն՝ Ուսումնական և Տնտեսական խորհրդոց կարծիքն ալ առնելով սահմանուած են, փորձառութեամբ պիտի վերաքննուին՝ երբ հարկը պահանջէ, և երբ Թաղ. խորհուրդը իսկ իրենց փորձառութեան արդիւնքը առաջարկեն առ կեդր. Վարչութիւնն. և վերաքննեալ մասերը գարձեալ պիտի հրատարակուին։ Բայց մինչեւ որ կեդրունական վարչութիւնը սոյն Հրահնիւ ամբողջին՝ կամ յաւելեալ և կամ յապաւեալ մասանց նորոգ հրատարակութիւն չընէ, սոյն Հրահնանդը ամբողջ պիտի գործադրուի. և թէ Պօլսոյ և թէ գաւառաց Թաղական խորհուրդը պարտաւոր են ըստ այսմ վարուեաւ։

11 Յունվար 1873

Ի. Պատրիարքարանի Հայոց  
Ի. Պ. Պօլս

Ապագաէ  
Աշխարհ և Երրուսակաւ Վարչութեան  
ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍ

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՍԵԱՆ

Դիտան Կրօնական Ժողով

ԱՅՆԱՇԽԱՐ

ԱՅՆԱՇԽԱՐ

Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

ԹԱԴԵՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՆ

Դիտան Քաղաքական Ժողով

ԱՅՆԱՇԽԱՐ

ԱՅՆԱՇԽԱՐ

Ա. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆՑ

ՍԵՆԵՐԵՐԻՄ Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



99

39

2001



# ԽՈՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՇՀՐԴՈՑ ՀԱՄԱՐ

Ա.

Ք Ն Տ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. Թաղական խորհուրդ(1) կը կաղմուի այն թաղին կամ գիւղին մէջ, ուր եկեղեցի կայ, և այն եկեղեցին ալ իրեն սեփհական ժողովուրդ ունի :

2. Խւրաքանչիւր թաղական խորհուրդ իր թաղին ժողովրդեան կողմէն կը նարուի :

Ամէն ազգային անհատ՝ որ 25 տարին լրացուցած է, և ընտրողութեան իրաւունքէն դատաստանապէս զրկուած չէ, (Տես Սահմ. յօդ. 67) իրաւունք ունի մասնակից ըլլալ ընտրութեան թաղական խորհրդոյ :

3. Ընտրական գործողութիւնները կատարելու համար եկեղեցւոյ բարողիչը կամ Աւագերէցը իր նախագահութեանը տակ ընտրողական ժողով մը կը կազմէ, (Տես Սահմ. յօդ. 71) :

4. Ընտրողական ժողովը կը բաղկանայ հրաժարեալ կամ առժամանակեայ թաղական խորհուրդը չուզէ մասնակցիլ ընտրական գործողութեան, նախագահը կ'ընտրէ 6 պատուաւոր թաղեցիններ, և անոնցմով կազմեալ ընտրողական ժողովը կը վարէ իր պաշտօնը :

Այսպէս կ'ըլլայ, երբ թաղական խորհուրդ մը վերընտրելի չըլլալու պայմանաւ լուծուի վարչութեան ձեռօք. նոյն լուծեալ թաղական խորհուրդը կը զրկուի ընտրողական ժողովոյ անդամակցութենէ :

(1) Թաղ. խորհուրդք կ. Պօլսոյ և շրջակայից մէջ ըստ անդւոյն ծէն մինչև 12 անդամներէ կը նան բաղկանալ. իսկ գաւառաց մէջ ծէն մինչև 7 անդամներէ :

= 6 =

6. Փուէարկութիւն և քուէհամար կը կատարուին ըստ ընժողական օրինաց, (Տես Սահմ. 72 էն 80 յօդուածը):

7. Ընտրական գործողութիւնը աւարտելուն պէս, ընտրողական ժողովն իր տեղեկագիրը կը պատրաստէ և ստորագրելով կը դրէ առ Ազգ. վարչութիւնն:

8. Եթէ թաղը կ. Պօլսոյ մէջ է՝ կեդր. վարչութեան բաղ. ժողովը նոյն տեղեկագիրը քննելէն, և ընտրական գործողութեանց օրինաւորութիւնը ստուգ ելէն ետքը՝ կը վաւերացնէ. և Պատրիարքական կոնդահաւ կը հաստատուի թաղական խորհուրդը:

Իսկ եթէ թաղը կամ քաղաքը կամ գիւղը դաւառի մէջ է, դաւառական վարչութեան բաղ. ժողովը կը վաւերացնէ. և Առաջնորդական կոնդակաւ կը հաստատուի թաղական խորհուրդը:

9. Հաստատութեան կոնդակն ընդունելով եկեղեցւոյ բարողիչը կամ Աւագ երէցը, կը հրաւիրէ ընտրեալները յեկեղեցի, և ծանուցանելով, կը չնորհաւորէ անոնց ընտրութիւնը:

10. Թաղական խորհուրդոյ պաշտօնը 4 տարի կը առէ, և հինգերորդ տարւոն սկիզբը կը նորոգուին և վերընտրելի են:

11. Թաղական խորհուրդոյ անդամ մը եթէ շաբաթական նիստի երեք անգամ իրարու վրայ բացակայ ըլլայ՝ առանց հիւանդութեան կամ ձանապարհորդութեան պատճառի, աղդամարութիւն կ'ընդունի թաղ. խորհուրդէն. և եթէ յաջորդ նիստին գարձեալ բացակայ մնայ, երկրորդ աղդամարութեամբ իրեն կը ծանուցուի որ եթէ միւս նիստին գարձեալ բացակայ մնայ, ինքնին հրաժարեալ պիտի համարուի:

12. Երբ սահմանեալ ժամանակէ յառաջ թաղական խորհուրդականութենէ հրաժարողաց թիւը երեքի(1) հասնի, թաղական խորհուրդը լավաբար է ծանուցանել Ազգային վարչութեան, որ յետ քննելոյ պատճու եթէ կոյ, անոնց տեղ նորոգ ընտրութեան հրահանդը կուտայ:

13. Եթէ թաղական խորհուրդը մը սահմանեալ ժամանակէն յառաջ հրաժարի, պարտական է իր հաշիւներն ալ ի միասին իր համարառու վարչութեան ներկայացնել, որ անմիջապէս նոր ընտրութեան հրահանդը կուտայ:

Կ. Պօլսոյ թաղ. խորհուրդք համարառու են կեդր. վարչութեան, և դաւառաց թաղական խորհուրդք իւրաքանչիւրն իւր դաւառական վարչութեան:

14. Եթէ թաղական խորհուրդը մը հաշիւները չի տուած հրաժարի իր պաշտօնէն, Ազգային վարչութիւնը առժամանակեայ թաղական խոր-

(1) թէ և 3 հրաժարելոց տեղ նորոգ ընտրութիւն կը լայ, բայց 3 անդամէ բարեկացնեալ խորհուրդէ մը երբ 2 ը հրաժարին, նոյնպէ 3 ով բաղկացեալ խորհուրդէ մը երբ 1 ը հրաժարի, մնացեալ անդամի հրաժարելոց տեղ նոր ընտրութիւն ընելու համար պարտական են ծանուցանել վարչութեան:

հուրդ մը կը կարդէ, մինչեւ որ նախորդին հաշիւները առնուին, և ապա նոր ընտրութեան հրահանդը կուտայ:

Այսպէս՝ եթէ նոր ընտրութեան դէմ արգելք ենէ, կամ թաղը յաւզուի և դժուարին ըլլայ ընտրական գործողութիւններն սկսիլ կամ շարունակել, Ազգային վարչութիւնն անմիջապէս առժամանակեայ խորհուրդ մը կը կարդէ, մինչեւ արգելքները բարձուին, կամ թաղը հանդապատճելով ընտրական գործողութիւններն սկսիլ և շարունակել հնարաւոր ըլլայ:

15. Երբ թաղական խորհուրդոյ մը մեծադոյն մասը հրաժարի. մինչեւ հրաժարման թուականն եղած հաշիւն ալ ի միասին պարտական է ներկայացնել վարչութեան. ապա թէ ոչ առժամանակեայ խորհուրդ կը կարգուի, և փոքրագոյն մասն ալ նոյն առժամանակեայ խորհուրդին տնդամենն է իսկ եթէ փոքրագոյն մասը ամբաստանութեան ներքեւ է, դարձեալ առժամանակեայ թաղական խորհուրդոյ անդամ են, մինչեւ քննութեան աւարտումը. այսպէս յաւարտ քննութեան ամբաստանութեան և հաշոյ՝ հրաժարելոց տեղ նորոգ ընտրութիւն կը լայ:

Թաղական խորհուրդոյ մը վրայ ետքէն ընտրութիւն եթէ ըլլայ, մնացելոց ընտրութեան թուականէն սկսեալ 4 տարւոյ տեսողութիւն տիտի ունենայ, և ոչ թէ նոր ընտրելոց թուականէն:

Բ.

ՊԱՇՈՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

16. Թաղական խորհուրդոյ պաշտօնն է.

Ա. Իր թաղին ժողովրդեան տղային գործոյ մատակարարութիւնը

Բ. Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը.

Գ. Վարժարանաց հոգաբարձութիւնը.

Դ. Աղքատաց խնամակալութիւնը.

Ե. Թաղեցւոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղաբարութիւնը:

17. Թաղ. խորհուրդը սոյն պաշտօնները բայց ի վարժարանաց Հոգաբարձութիւնէն, ինք անձամբ՝ կամ իր մէջէն և կամ դրսէն և կամ խառն ընտրեալ հոգաբարձութաց միջոցաւ կը վարէ:

18. Թաղ. խորհուրդը մը եթէ իր պաշտօնին և պարտաւորութեան համար ներքին կանոնադրի պէտք ունենայ, կը պատրաստէ Սահմանադ-

րութեան և ներկայ Հրահանգիս տրամադրութեանց համաձայն, և իր համարառու վարչութեան վաւերացնել տալէն յետոյ կը դործադրէ:

19. Խոկ վարժարանաց համար ի հարկէ առանձին Հոգաբարձութիւն կը կազմէ, իր մէջէն կամ դրսէն և կամ խառն ընարելով 3 էն մինչե Յ ուսումնական և ուսումնատէր անձինք: Աղջկանց վարժարանի խնամակալութիւնն ալ՝ եթէ կարելի է՝ ձեռնհաս տիկիններու կը յանձնէ, ապա թէ ոչ՝ Հոգաբարձութեան տեսչութեան ներքե կը թողու:

Թաղ. Խորհուրդը ընտրեալ Հոգաբարձութիւնն և խնամակալութիւնը կը ծանուցանէ տեղւոյն Ուսումնական խորհրդոյ, որպէս զի անոր հետ դպրոցական խնդրոց վրայ յարաբերութիւն ունենան:

20. Թաղ. Խորհրդոյ անօրէնութեան ներքե է եկեղեցւոյ մնտուկը. որոյ մուտքն են թաղին ժողովրդեան կողմէն արուած թաղական տուրքը, եկեղեցւոյ և վարժարանի կալուածոյ եկամուտները, եկեղեցւոյ հասոյթերը, կատակաւ կամ ուրիշ կերպիւ եղած նուերները, ևն:

Եթեն են՝ եկեղեցւոյ և վարժարանի սահմանեալ ծախքը, Աղջային Վարչութեան (Կեդրոնական կամ Գաւառական) մնտուկին յատկացեալ տուրքը, ու աղքատաց արուելիք օդնութիւնները, ևն:

21. Երբ եկեղեցւոյ մը նիւթական վիճակը անբաւական ըլլայ, եթէ դաւառի մէջ է՝ գաւառական վարչութեան, և եթէ կ. Պօլսոյ մէջ է՝ կեդր. վարչութեան պարտքն է ըստ կարելոյն անոր նպաստել:

Այսպէս երբ եկեղեցւոյ մը սեպհական ժողովուրդը նուազած ըլլայ՝ կամ անբաւական համարուի, եթէ գաւառի մէջ է՝ գաւառական վարչութեան, և եթէ կ. Պօլսոյ մէջ է՝ կեդր. վարչութեան անմիջական տեսչութեանը ներքե կ'ըլլայ նոյն եկեղեցին:

22. Թաղական խորհուրդը պէտք է որ ըստ կարելոյն օրինաւոր դիւանատուն ունենայ իր յարաբերութեանց համար: Պէտք է նաև որ թաղին մէջ եղած ծննդոյ, ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւններն ընէ կանոնաւոր կերպով մասնաւոր տումարի մէջ:

23. Ամեն թաղական խորհուրդ պարտական է,

Ա. Եկեղեցւոյ և վարժարանի հասութից և կալուածոց(1) պահպա. նութեանը և բարդաւաճմանը հոգ տանիլ.

Բ. Թաղին մանուկներն և աղջիկները աղդային դաստիարակութեամբ կրթելու փոյժ ունենալ, և թոյլ ու անհոգ ծնողները յորդորել և պարտաւորել զանոնք՝ զաւակնին վարժարան զրկելու, և կարօտեալ ները ձրի դաստիարակել տալու:

(1) Աղջային կալուածները, ինչպէս նաև եկեղեցի և վարժարան և այլ չնքեր՝ հրդեհի դէմ ասպահովելու հոգ պիտի տանին Թաղական խորհուրդը, մ. նաւանդ ուր որ ապահովութեան տուներ (սիկուրթա) հաստատուած ըլլալով, Դ. ւրութիւն կոյ:

24. Թաղ. Խորհուրդը պարտական է եկեղեցւոյ և վարժարանի կալուածոց և ամենայն հաստատութեանց կալուածադրերուն օրինակը զրկել տեղւոյն ջնտ. խորհրդոյ. և անսնց վիճակը ներկայացնել երկու տարին անդամմ մը:

25. Որ և է կալուածի համար, որ վարձու կը տրուի, Թաղ. Խորհուրդը պարտական է ըստ օրինի գաշնագիր (քօնթրաթ) ունենալ վարժակալին հետ, մէկ տարուան և առ առաւելն երկու տարուան համար: Եթէ կու տարիին աւելի միջոցով եթէ վարձու տալ հարկ ըլլայ, տեղւոյն ջնտ: Խորհրդոյ հաւանութեանը պիտի դիմէ: Նոյնպէս ջնտ. խորհրդոյ պիտի դիմէ եթէ վարձակալին հետ նորոգութեան կամ շինութեան՝ և այլ տեսակ սովորականէ դուրս գաշնագիր մը ընելու պէտքը տեսնուի:

26. Թաղ. Խորհուրդը որ և է գնումն և վաճառումն չիկրնար ընել, մինչե որ կանխառ տեղւոյն ջնտեսական խորհրդոյ հաւանութիւնը շառնու:

Սիկուլական պարագայի մը մէջ կընայ շահաւոր բան մը գնել և անմիջապէս ծանուցանել ջնտ. Խորհրդոյ. բայց որ և է շարժական և անշարժ ստացուածք չի կընար վաճառել, առանց ջնտես. Խորհրդոյ հաւանութիւնն առնելու կանխառ:

Իսկ եթէ թաղի մը մէջ գտնուած եկեղեցի և այլ աղդային հաստատութիւն իրեն սեփհական վագնք ունի, Թաղ. Խորհուրդը վագնքի օրինաց համեմատ առուծախը կը կատարէ, և աեղեկագրով մը կը ներկայացնէ վարչութեան, և Պատրիարքական կամ Առաջնորդական կնքով կը վաւերանայ սէնեֆը:

27. Թաղ. Խորհուրդը Պատմական վոխառութիւն և վոխառութիւն փի կրնար ընել, մինչե որ ջնտ. Խորհրդոյ հաւանութիւնը շառնու: Եթէ ընչհակառակն վարուի, իր անդամոց անձնական պարտքը պիտի համարուի:

28. Որ և է փոխառութեան և այլ գոյացած պարտուց համար տըրաւծ պարտագիր (սէնէտ) Թաղական խորհրդոյ կնիքը և անդամոց ամէնուն կամ մեծագոյն մասին ստորագրութիւնը պիտի կըէ:

29. Թաղ. Խորհուրդը կրոջէ եկեղեցւոյ և վարժարանի կալուածոց վերաբերեալ նորոգութիւնները և շինութիւնները, բայց կանխառ հաճութիւն առնելով ջնտ. Խորհուրդէն, ի բաց առեալ այն մանր մունի նորոգութիւնները կամ շինութիւնները. որոնք ոչ փոխառութեան պէտք ունին, և ոչ ալ եկեղեցւոյ անտուկին ընթացիկ վիճակին խոչընդառ կըրնան ըլլալ:

30. Թաղ. Խորհուրդն իր մէջէն կ'ընարէ Գանձապետը և իր մէջէն կամ դրսէն՝ Համարակալ, և Ատենապետի մը ու Ատենագպրի ընտրութեան հետ՝ կը ծանուցանէ Աղջային վարչութեան:

Գանձապետը կ'ընէ որոշեալ ծախքերը ըստ հաշուեկուի (պիտիածէ), որ ամէն աաբեգլուխ Թաղ. Խորհուրդը պիտի պատրաստէ յաջարդ տար:

նւան համար, և տեղւոյն ջնտեսական խորհրդոյ պիտի ներկայացնէ ի վա-  
ւերացումն և Նոյնպէս արտաքոյ կարդի ծախքերը կընէ գանձապետը ըստ  
որոշման թաղ. խորհրդոյ ։ Ամէն տարեգլուխ թաղ. խորհուրդը անցեալ  
տարւոյ հաշուեցոյցը անպատճառ պիտի ներկայացնէ ջնտեսական խոր-  
հրդոյ ։

31. Իւրաքանչիւր թաղ. խորհրդոյ նորոգ ընտրութեան ատեն ջնտ.  
խորհուրդը պէտք եղածին չափ վաւերացեալ տումարներ պիտի տայ-  
օրինակի համար արձանագրութեան, անտուկի, օրհաշուի, մայրհաշուի,  
շարժական և անշարժ ստացուածոց արձանագրութեան, կտակաց ևն.  
որչափ տեսրակի որ պէտք կայ նոյն թաղին համար ։

32. Գանձապետը պարտական է սնտուկը մտած և ելած ամենոյն  
դրամական գործողութիւն օրին արձանագրել սնտուկին տումարին մէջ.  
անանկ որ երբ ջնտ. խորհուրդը սնտուկին տումարն ուղէ կամ տեսնէ,  
ելից և մույշ գումարները ճշդիւ պիտի երեան, և սնտուկի տետրին  
համեմատ սնտուկին վիճակը պիտի տեսնուի, բացը դանձապետին անձ-  
նական պարտքը պիտի համարուի. և սնտուկին տետրէն գուրս եղած  
եկամտից և ծախուց արձանագրութիւն անվաւեր է ։



## Գ.

ՊԵՏՈՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՎՈՐՃԱՐԱՆԱՅ

33. Ազգային գաստիարակութեան և նախնական ուսմանց գլխաւոր  
և անհրաժեշտ աւանդելիքն են հետեւալները,  
(Ա. Կարժ) Ա. Քրիստոնէական վարդապետութիւն ըստ գաւանութեան  
Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցւոյ. և Սրբազն պատմութիւն հին  
և նոր կտակարանաց ։

Բ. Ազգային գրաբառ լեզու, ցթարդմանութիւն Ս. Աւետարանի ։

Գ. Ազգային Պատմութիւն՝ հանդերձ Հայաստանի աշխարհագրու-  
թեամբ ։

Դ. Եկեղեցական երգեցողութիւն ։

(Բ. Կարժ) Ե. Տարերք թուագիտութեան և Երկրաշափութեան հան-  
դերձ գծագրութեամբ ։

Զ. Տարերք Աշխարհագրական ուսմանց ։

34. Իւրաքանչիւր վարժարան այս ուսմանց գոնէ Ա. կարդին նախ-

նական գիտելիքը պիտի աւանդէ ։ և աշակերտը որոշեալ քննութիւնն  
անցընելէ և վկայագիրն ստանալէ յետոյ, կ'անցնի թէ այս ուսմանց ըն-  
դարձակ մասը և թէ այլ կարևոր ուսումներն առնելու ըստ Յայտագլի  
Ուսումնական խորհրդոյ կեդրոնական վարչութեան ։

Հետեւաբար նախնական ուսմանց ընթացքն աւարտող աշակերտաց  
գարձեալ անհրաժեշտ պիտի աւանդուին՝ մինչև յաւարտ դպրոցական  
ընթացից հետեւալները,

Ա. Փրիստոնէական վարդապետութիւն և կրօնագիտութիւն, հան-  
դերձ պատմութեամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ ։

Բ. Ազգային գրաբառ լեզու, նախնեաց մատենագրութիւն ։

Գ. Ազգային Պատմութիւն՝ հանդերձ ազգային հնախօսութեամբ ։

Դ. Եկեղեցական երգեցողութիւն հանդերձ ձայնագրութեամբ յար-  
մարաւորներու. Եկեղեցական ժամերգութեանց կարդաւորութեանն ալ  
յատուկ խնամ տանելով ։

35. Իւրաքանչիւր վարժարանի մէջ ամէն օր որոշեալ ժամանակ ընդ-  
հանուր գասախօսութիւն պիտի ըլլայ բարոյականի՝ և ազգային և ըն-  
տանեկան կրթութեան վրայ ։

36. Ա. Ազգային վարժարանները, որ մասնաւորաց կամ ընկերութեանց ձե-  
ռոքը կը մատակարարուին, և Ազգային վարչութեան պաշտպանութեան  
ներքեւ են. Ազգային վարժարանաց պէս պարտական են ընթանալ ։

37. Հոգաբարձութեանց դիմաւոր պարտքն է հոգ տանիլ նախ-  
նական գիտելիք աւանդութեանը և անոնց գասաւուաց և դասագրոց  
ընտրութեանը. Քրիստոնէականի և կրօնագիտութեան, և Սուրբ Գրոց  
և Եկեղեցւոյ Պատմութեան դասաւուներն ընդունելով ըստ հրահանգի  
կրօնական ժողովոյ, և այլ ուսմանց դասաւուներն ընդունելով ըստ հրա-  
հանգի Ուսումնական խորհրդոյ ։

38. Դասաւու և այլ դպրոցական պաշտօնեայ Հոգաբարձութեան  
պատասխանաւու են միայն. և Հոգաբարձութիւնն ալ պարտաղանցը  
յուղութիւն հրաւիրելու և անուղղայներն իրենց պաշտօնէն արձակելու  
իրաւունքն ունի. բայց դասաւուք ալ իրաւունք ունին գիտողութիւն  
կամ բոլոք ներկայացնել Ուսումնական խորհրդոյ ։

39. Իւրաքանչիւր Հոգաբարձութիւն զինքն ընտրող թաղ. խորհրդոյ  
և իր տեղելոյն Ուսումնական խորհրդոյ պատասխանաւու է. և պարտա-  
զն է վարժարանի տեսչութիւնը վարել ըստ հրահանգի Ուսումնական  
խորհրդոյ ։ Խակ եթէ ներքին ընթացքի համար յատուկ կանոնագրի պէտք  
ունենաց կը պատրաստէ, և թէ թաղական և թէ Ուսումնական խորհրդոյ  
վաւերացնել տալէն յետոյ կը գործադրէ ։

40. Թաղ. խորհուրդը պարտական է ամեն ամսու գլուխ առանց  
յապաղման Հոգաբարձութեան վճարել որոշեալ ամսական գումարը Եկե-  
ղեցւոյ անտուկէն ։ Այս ամսական գումարը վարժարանին պիտոյիցը և

Եկեղեցւոյ անտուկին կարողութեան . համեմատութեամբը կանխաւ կ'ու բոշուի թաղ . խորհրդոյ և Հոգաբարձութեան մէջ տեղւոյն Ռւս . Խորհրդոց խորհրդակցութեամբը :

41° Հոգաբարձութիւնը վարժարանաց նիւթական պիտոյքը կը հոգայ թէ եկեղեցւոյ անտուկին որոշեալ ամսականաւը , և թէ աղայոց ծընողներէն առած թոշակովը կամ ժողովրդէն ըրած դպրոցական հանգանակութեամբը :


42° Թաղ . խորհուրդն եթէ ժամանակէն յառաջ հրաժարի կամ լուծուի , Հոգաբարձութիւնը կը շարունակէ իր պաշտօնը յաջորդէն ընդունելով յատկացեալ ամսական գումարը : Եթէ Հոգաբարձութեան մէջ թաղ . խորհրդոյ անդամ գտնուի , իր Հոգաբարձութեան պաշտօնը կարող է շըրունակել :

43° Իսկ եթէ Հոգաբարձութիւնը ժամանակէն յառաջ հրաժարի կամ լուծուի , թաղ . խորհուրդը ըստ հրահանդի Ռւսումնական խորհրդոյ ընտրութիւնը կը լիւ :

Եթէ թաղ . խորհուրդը չուզէ կամ չի կրնայ այս ընտրութիւնը վութացնել , Ազգային վարչութեան Ռւս . խորհրդոյ պարտքն է անմիջապէս առժամանակայ Հոգաբարձութիւն մը կարգել , և վարժարաններն անխրնամ չի թողուլ :

44° Հոգաբարձութեանց պաշտօնը 4 տարի կը տեէ , և վերընտրելի են , եթէ թաղական խորհուրդն արժան գատի :

45° Ազգկանց վարժարանի խնամակալութիւնը ալ յար և նման Հոգաբարձութեան պաշտօն ունին . և ազգկանց վարժարանաց մէջ Եկեղեցական երդեցողութիւնը պարսուառիչ չէ . անոր անդ Ասպեկտործութիւնն է անհրաժեշտ աւանդելի :



## Դ.

### ԱՄԲՈՅՏՍՆՈՒԹԻՒՆ

46° Թաղական խորհուրդը կ'ամբաստանուի կամ իր անդամներէն , և կամ իրմէ ընտրեալ Հոգաբարձութիւններէն :

47° Ամբաստանութեան կամ բողոքոյ գիր կուղուի առ թաղ . Ժողով , որ կը յանձնէ պատկանեալ խորհրդոյ՝ լսել անոնց :

48° Ամբաստանութեան խորհուրդը նախ բացատրութիւն կը պահանջէ ամբաստանեալ թաղ . խորհուրդէն . և երբ գոհացուցիչ չի դոնէ՝ քննիչ կը զրկէ նոյն թաղը , և քննութեան արդիւնքը կը հաղորդէ բաղաքա-

կան ժողովոյ : Քաղ . ժողովը ըստ տեղեկադրի և ըստ ծանրութեան թերութեանցն կը դատէ զթաղ . խորհուրդը , կամ 'ի կանոնադահութիւն և 'ի կարգ հրաւիրելով զնա . կամ եթէ ծանր է ամբաստանութիւնն և առաջուցեալ , կը լուծէ թաղ . խորհուրդը , վերընտրելի ըլլուրու պայմանաւ :

Այսովէս 'ի կանոնապահութիւն և 'ի կարգ հրաւիրեալ թաղ . խորհուրդը մը եթէ միւսանդամ ևս ամբաստանուի և հաստատուի , կը լուծէ եի՛ բայց վերընտրելի ըլլալու պայմանաւ . երբ դարձեալ ընտրուի և ամբաստանուի ու ամբաստանութիւնը հաստատուի ; այն անդամին համար վերընտրելի ըլլալու պայմանաւ կը լուծուի :

49° Երբ քննութիւնը ամբաստանող կամ բողոքող կողմին աննպաստ ըլլայ . եթէ ամբաստանութիւնը ծանր է , և կամ երկու անդամ ամբաստանող գտնուելով՝ չեն յաջողած հաստատելու , թէ թաղ . խորհրդոյ և թէ Հոգաբարձութեան անդամ ըլլան , կը լուծուին պաշտօնէ :

50° Ա արժարանաց Հոգաբարձութիւնն և խնամակալութիւնն ալ կ'ամբաստանուին կամ իր անդամներէն , կամ թաղ . խորհրդէն և կամ դաստառներէն :

Երբ ամբաստանութիւնը իր անդամներէն կամ դաստառներէն է , Ռւսումնական կամ թաղական խորհրդը բացատրութիւն կը պահանջէ . և 'ի հարկին թաղական խորհրդոյ միջոցաւ քննութիւն կ'ըլլայ ըստ յանձնարարութեան Ռւսումնական խորհրդոյ : Երբ թաղական խորհրդն է ամբաստանողը , Ռւսումնական խորհրդն իր կողմէն քննիչ կը զրկէ . կամ 'ի հարկին իր ատեանը կը հրաւիրէ թէ ամբաստանող խորհրդը և թէ ամբաստանեալ Հոգաբարձութիւնը :

Ամբաստանութիւն մը երբ հաստատուի , Ռւսումնական խորհրդը կը տեղեկադրէ առ թաղաքական ժողովն 'ի տնօրէնութիւն :

51° Ինչ որ է ամբաստանեալ թաղական խորհրդոյ համար , նոյնն է նաև Հոգաբարձութեան և խնամակալութեան համար :

52° Թաղական խորհրդոյ և Հոգաբարձութեան դէմթաղին ընտրողները միայն Ազգային վարչութեան կը բողոքեն , որ պատկանեալ խորհրդոյ կը յանձնէ պէտք եղած բացատրութիւնը պահանջել , և 'ի հարկին քննութիւնն ընել , և տեղեկադրել վարչութեան :

Այս օրինաւոր ընթացքէն զատ եթէ ուրիշ միջոցի դիմեն ընտրողք , իրենց բողոքող ըլլալու իրաւունքէն դրկուած պիտի համարուին . և ըստ ծանրութեան յանցանաց պիտի դաստուին , թէ հրապարակաւ նշաւակուելով և թէ յաջորդ ընտրութեան իրաւունքէն զըկուելով :



ՄԻԶԱՄՏՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

53. Ազգային վարչութեան (կեդրոնական և գաւառական) տեսուչ Խորհուրդներն ի հարկին իրաւունք ունին միջամտել, և իրենց համարատու թաղական խորհրդոց և Հոգաբարձութեանց դործառնութիւնքը քննել:

54. Երբ Ազգային վարչութիւնը տեղեկանայ որ Թաղական խորհուրդ մը կամ Հոգաբարձութիւն մը Ազգային Սահմանադրութեան և կեդրոնական վարչութենէն սահմանեալ օրինաց և հրահանդաց հակառակ ընթացքի մէջ են, և իրենց պաշտօնն ու պարտաւորութիւնը չեն կատարեր, իրաւունք ունի ազդարարութիւն ընել և բացատրութիւն պահանջել: Ի հարկին տեսուչ ևս կը դրկէ նոյն թաղը:

55. Եթէ յամառին իրենց ընթացքին մէջ, վարչութիւնը տեսչին միջոցաւ, կամ զանոնք հրաւիրելով իր առեանը՝ քննութիւն կ'ընէ. Եթէ յանցապարտ ենեն, ՚ի կանոնապահութիւն և ՚ի կարգ կը հրաւիրէ:

Եթէ դարձեալ յամառին, կը լուծէ զանոնք:

56. Եթէ Թաղական խորհուրդ մը կամ Հոգաբարձութիւն մը Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութեան և օրինաց, և Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբանց հակառակ վարուած են. Աղդային մատակարարութեան և սեփականութեանց մէջ նենդութեամբ բռնուած, և Ազգային յառաջադիմութեան գիտմամբ մասսակար դըմբուած են, և Ազգային դաստիարակութիւնն ու նախնական անհրաժեշտ դիտելիքները կամաւ զանց ըրած են, վերընտրելի չեն իրենց պաշտադիտելիքները կամաւ զանց ըրած են, վերընտրելի չեն իրենց պաշտաման համար. ՚ի բայց առեալ փոքրադոյն մասը, Եթէ անհամամիտ և բողոքարկու է մեծագոյն մասին դէմ:

Իսկ երբ վերընտրելի չըլլալու չափ ծանր յանցանք մը չունենալով լուծուին, և նորոգ ընտրուելին յետոյ միւնյոն ընթացքը շարաւնակեն, Ա. Բ. Գ. ազդարարութիւնն ընդունելին յետոյ կը լուծուին՝ այն անդամին համար վերընտրելի չըլլալու պայմանաւ:

2013



Գին 2 դուրս



ԱՆԴՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՈՒԿԻՆ



Կը ծախուի ի Դիւանատուն Պատրիարքարանի , և կը  
գտնուի Գրադաճառաց քով :

